

Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ
ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Սույն հոգևածի նպատակը արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների փոխհարաբերության և նրանց զուգադրական բընության ընթացքում կիրառելիք տեղեկությունների սրտզարմամն է:

Արդի հայերենը հայտնի է երկու՝ արևելահայ և արևմտահայ ճյուղավորումներով, որոնցից արևելահայերենը հեղափոխությունից հետո բարձրացել է պետական լեզվի տատիճանի, իսկ արևմտահայերենը Արևմտահայաստանի բնակչության բնաջնջումից հետո մնացել է որպես սփյուռքահայության լեզվահաղորդակցման միջոց:

Հայագիտության համար կարևոր է պարզել, թե ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում ժամանակակից հայոց լեզվի այդ երկու ճյուղավորումները և ինչպես պետք է որակել դրանց տարբերությունները:

Ամենից առաջ պետք է տարբերել երկու կարգի չափանիշներ՝ արտալեզվական և բուն լեզվական: Կարո՞ղ են, արդյոք, որոշիչ լինել արտալեզվական աճապիտի գործոններ, ինչպես տվյալ ժողովրդի՝ տարբեր պետությունների կազմի մեջ մտնելը, դրա հետևանքով առաջացած քաղաքական, տնտեսական, մշակութային տարբեր պայմաններում գտնվելը, աշխարհագրական անջատվածությունը: Մի շարք լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ նշված հանգամանքների բավական երկար ժամանակ գոյատևումը իրոք վճռական գոր է տառնում ինչպես միևնույն ժազումնաբանական հիմքից առաջացած լեզուների միջև առկա ընդհանրությունների աստիճանական նվազման և բացարձակ խեղդողությունության ձգտման, այնպես էլ՝ նույն լեզվի հատվածների տարանջատ գոյության հետևանքով զարգացման միևնույն ուղղվածության խաթարման գործում:

Դնդամին միանգամայն հնարավոր է, որ մեկ լեզվի երկու տարբերակների միջև բավական երկար ժամանակահատվածում բավարարկայի, շփման բացակայության հետևանքով առաջանան երկու ինքնուրույն լեզուներ: Մինչդեռ ժամանակակից հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների թուուցիկ զուգադրությունն անդամ ակնբախ է դարձնում նրանց միջև եղած շփման կետերի ոչ թե նվազեցումը, այլ ընդհակառակն՝ աճը¹: Անուրանալի է արևելահայ գրական տարբերակի ազդեցությունը արևմտահայերենի վրա: Եվ դա ընական է. պետական լեզվի աստիճանի բարձրացած արևելահայերենը որոշակի նորմավորման է ենթարկվել և լեզվակառուցվածքի զարգացման ընդհանուր միտումներով ազդում է նաև արևմտահայ գրական լեզվի վրա: Վերջինս իր հերթին նույնպես որոշակի ազդեցություն ունի գրական արևելահայերենի վրա:

Լեզվաբանության համար էական համարելով ոչ թե արտաբերվական գործոնները, այլ լեզվական գործոնը, պետք է նշել, որ արդի հայերենի առգ երկու վիճակների հնչյունաբանության, քերականական կառուցվածքի և բառապաշարի ոլորտներում եղած տարբերությունները արևելահայերենը բնավ անհասկանալի չեն: դարձնում արևմտահայերենի համար և ընդհակառակն: Արևելահայերենի և արևմտահայերենի բառաքերականական կառուցվածքների միջև առկա տարբերությունները հաճախ արդյունք են հայերենին ընդհանրապես հատուկ համանիշային շարքերի մրցակցության մեջ տարբեր ընարոգությունների, ընդհանրապես հայերենին հատուկ արտահայտության հնարավոր մի շարք ձևերից դերազանցապես այս կամ այն ձևին առաջնություն տալուն (հմմտ. սպիտակ-ճևրմակ-ի կիրառությունը երկու տարբերակներում):

Ձի կարելի առկա լեզվական տարբերությունների վրա հիմնովելով իսկույն ևեթ եզրակացնել, որ գործ ունենք տարբեր ազգային լեզուների հետ, որովհետև լեզվաբանությանը շատ դեպքեր են հայտնի, երբ մեկ լեզվի երկու տարբերակների միջև եղած անհամապատասխանությունները (տարբերությունները) ստացվել են ավելի մեծ, քան երկու տարբեր, բայց ցեղակից լեզուների միջև (օրինակ՝

¹ Մեր երկու գրական տարբերակների փոխադարձ ազդեցությունների ուժեղացման պատճառներից մեկը թերևս կարելի է փնտրել սփյուռքահայերի մասսայական ներգաղթի (հայրենադարձության) մեջ: Ծագումով արևմտահայ արևելահայերենը լրավական հետաքրքիր փաստեր կարող է տալ մեր երկու գրական տարբերակների լեզվական իրավությունների կենդանի սերտաճման: Այդ առումով փայլուն օրինակ կարող է հանդիսանալ նշանավոր դերասան Վահրամ Փափազյանի լեզուն:

ռեպրոդուկցիաներն են Էնգազին և սելվի տարբերակների միջև անհամապատասխանությունները ալելի մեծ թիվ են կազմում, բան իսպաներենի և պորտուգալերենի միջև առկա անհամապատասխանությունները²։ Հետև շղնալով՝ օրինակներ կարելի է բերել նաև հայերենից։ Հիմնական առկա տարբերությունների վրա, նույն մոտեցմամբ, հայոց լեզվի բարբառների մեծ մասը մեկ լեզվի մեջ մտցրելը կլինի իսկապես անհնար, մանավանդ եթե նկատի ունենանք, որ հայոց լեզվի մեկ բարբառի ներկայացուցիչը կարող է առ բարբառով խոսողին բնավ չհասկանալ։

Անժխտելի է, որ թե՛ արևելահայերը, թե՛ արևմտահայերը երբեք էլ չեն ըմբռնում երկու տարբեր ազգային լեզուների գոյության փաստը։ Հայոց ազգը ունի մեկ ազգային լեզու՝ ժամանակակից հայոց լեզուն իր երկու գրական դրսևորումներով։ Այդ է ընդունում, ընդհանրաբար, նաև հայ լեզվաբանների մեծ մասը։ Նշելով, որ հայոց լեզուն ներկա համաժամանակյա կտրվածքով մեզ տրված է երկու վիճակով՝ արևելահայերեն և արևմտահայերեն, սխալ կլինի նրանցից մեկն ու մեկին առավելություն տալով մյուսը իսպառ անտեսելը։

Ժամանակակից հայոց լեզվի քննությունը նորագույն (կառուցվածքային, փոքնառական և այլ) լեզվաբանական մեթոդներով կատարվել է բացառապես հիմնական գրական արևելահայերենի նյութի վրա, մի բան, որը խանգարում է հայոց լեզվի կառուցվածքի ամբողջական մատուցման (նկարագրման) գործին։ Նախքան այլ լեզուների հետ համեմատության մեջ դնելը հայ լեզվաբանության համար թերևս կարևորագույն հարցերից մեկը այն է, թե ինչ է ընդհանրապես ճանաչված և ինչ է բացառվում մեր երկու լեզվանյութում ընդհանուր առմամբ։ Այդ հիմնական նպատակին էլ ժառանգում է ներկա զուգադրական քննությունը։

Հայագիտության մեջ մինչև վերջին ժամանակներս բավարարչափով չի ուսումնասիրվել այն հարցը, թե ինչ առտիճանի (կոնկրետ տվյալներով) ընդհանրություններ և տարբերություններ կան երկու գրական լեզուների միջև³։ Ավելին, դեռևս չի պարզված, թե

² М. А. Бородин, К вопросу о различии между близкородственными языками и вариантами одного языка («Генетическое родство и структурные различия между языковыми системами», тезисы докладов, М., 1969, стр. 10).

³ Պրոֆ. Գ. Զահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» գրքում (Երևան, 1972) հայ բարբառների իր կողմից առաջ քաշված բազմահատկանիշ գա-

առկա տարբերությունները ինչպիսի բաշխվածություն ունեն ըստ լեզվագործածության ոլորտների՝ առհասարական լեզվագործածության (կիրառկություն), կանոնական (նորմայի) և կառուցվածքային: Այդ հարցի լուծումը մեծապես կարող է նպաստել մեր գրական լեզուների ոչ թե մեխանիկական մերձեցմանը, այլ վերջիններիս համար զարգացման ընդհանուր ուղիներ փնտրելու գործին:

Դրա համար անհրաժեշտ է արևելահայ և արևմտահայ գրական լեզուների համեմատականային հարվածքների տիպաբանական-զուգահեռական քննություն կատարել: Այդ աշխատանքը, բնականաբար, կրիչի բնութագրական (խարակտերոլոգիական), ընդ որում, ժամանակակից հայոց լեզուն կբնութագրվի ինքն իր մեջ:

Ցուրաքանչյուր զուգահեռական ժամանակ սխալանքվում է ամենից առաջ պարզել, թե ինչը պետք է դրվի զուգահեռական հիմքում, զուգահեռվող լեզվավիճակներից որն է համարվում համեմատելի եզր: Բնականաբար, այստեղ առաջանում է էտալոն կամ միջակա լեզվի խնդիրը: Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահեռական քննության ժամանակ միջակա (էտալոն) լեզու ըստեղծելու անհրաժեշտությունը, ըստ էության, չի առաջանում: Ընդամենն տեսականորեն կարելի է թե որպես հիմք և թե որպես զուգահեռվող եզր վերցնել ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզուն: Ներկա զուգահեռական հիմքում դրվում է արևելահայ գրական լեզուն և հետևողականորեն զուգահեռվում է վերջինիս հետ արևմտահայ գրականը: Այսպիսով, փաստորեն, ժամանակակից հայոց գրական լեզուն տիպաբանական բնութագրման է ենթարկվում ինքն իր մեջ, առանց այլ լեզուների հետ համեմատվելու:

սակարգման արդյունքների հիման վրա քննում է նաև արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մերձավորության աստիճանը: Այդ մասին կխոսվի ստորև:

4 Թեև լեզվաբաններից ոմանք բուն տիպաբանական քննության սկիզբը համարում են սկսած այն պահից, և միայն այն պահից, երբ դուրս ենք գալիս ցեղակից լեզուների զուգահեռական ոլորտից դեպի ոչ-ցեղակից լեզուների զուգահեռական ոլորտը (հիմա. Յ. Макаев, Отбор констант для построения типологическои грамматики германских языков, сб. «Структурно-типологическое описание современных германских языков», М., 1966), սակայն, ըստ էության, տիպաբանական և կամ ոչ-տիպաբանական բնութագրումը որակումը ցեղակցությամբ և ոչ ցեղակցությամբ չի պայմանավորվում: Անշուշտ, ցեղակից լեզուների դեպքում ընդհանրությունները ինքնըստիցյան ենթադրելի, ակնկալելի են: Այնպես ինչպես Շլեյխերի խոսելի ըմբռնմամբ տիպաբանական մերձակցությունը բոլոր

կարևոր է խմանալ, թե ինչ սկզբունքներով ու մեթոդներով պետք է կատարել լեզվակառուցվածքների զուգադրությունը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ արևելահայ և արևմտահայ գրքակաճարներին զուգադրությունը իրադրությունների է նույն ըսկզբունքներով և մեթոդներով, ինչ ցեղակից լեզուներինը (ներկա դեպքում, բնականաբար, պետք է ենթադրել նշանակալից ընդհանրությունների առկայություն):

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական սկզբունքները.

1) Քննության ընթացքում պետք է հենվել ճամակագային երևույթների վրա: Լեզվական որոշ իրողությունների պատահական համընկնումները կամ շեղումները չեն կարող ըստ էության բնութագրել զուգադրվող լեզվակառուցվածքները: Նախքան զուգադրությունը պահանջվում է նախապես պարզել թե՛ արևելահայերենի և թե՛ արևմտահայերենի լեզվական անսովորականները, վերջիններիս և նրանց փոփոխականների միջև առկա հարաբերությունները: Ընդամենն արևելահայերենի փոփոխականներից մեկը չի կարելի զուգադրել արևմտահայերենի համապատասխան երևույթն արտահայտող անսովորականի հետ և, ընդհակառակն, արևմտահայերենի փոփոխականներից մեկը դնել արևելահայերենի անսովորականի հետ միևնույն մակարդակի վրա:

2) Յուրաքանչյուր լեզվական երևույթի քննության ժամանակ միշտ պետք է նկատի ունենալ զուգադրվող միավորի (լեզվատարրի) տեղն ու նշանակությունը (արժեքը) լեզվի ընդհանուր համակարգում: Ընդ որում, համակարգի բաղադրիչ տարրերը ամհրաժեշտ է զուգադրել ոչ թե կտրտված ձևով, այլ ըստ որոշակի համակարգային ուղղորդների (առնել, հնչույթային համակարգը ըստ ձայնավորական և բաղաձայնական ուղղորդների և այլն), որպեսզի լեզվի կառուցվածքային առարկայական արտկերը ճիշտ լինի:

3) Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քնն-

դեպքերում ծագումնաբանական ընդհանրություն էր մատնանշում և ճիշտ չէր, ալդպես էլ թերևս ներկա դեպքում միայն ոչ-ցեղակից լեզուների զուգադրությունը տիպաբանական համարելը վիճելի է: Ժիշտ կլինե՞ր ցեղակից լեզուների զուգադրությունը համարել միկրոսիզոլոգիա, ոչ ցեղակից լեզուներինը՝ մակրոսիզոլոգիա, ինչպես և վարվում է Սկալուիչան (սե՛ս В. Скалуицк. К вопросу о типологии, ВЯ, 1966, № 4).

նության⁵ ամբողջության համար չպետք է բավարարվել ընդվական միայն մեկ մակարդակի քննությամբ (ասենք, միայն ձևաբանական վամ միայն շարահյուսական)։ Պետք է ուշադրության առնել բոլոր ընդվական մակարդակները հավասարապես։ Ընդ որում, կառուցվածքային ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտումը անհրաժեշտ է կատարել ըստ առանձին մակարդակների, որոշակի հաջորդականությամբ՝ հնչյութային, ձևաբանական, շարահյուսական։ Այդ ամենն չի նշանակում, որ մեկ մակարդակից ստացած արժեքները չեն կարող օգտագործվել հաջորդ մակարդակին անցնելիս։ Մի մակարդակի քննությունից կարելի է, թեկուզ և ընդհանուր, պատկերացում կազմել հաջորդ մակարդակի այս կամ այն բնորոշ գծի մասին։ Այսպես, օրինակ, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչյութային մակարդակների զուգադրությունից հետևում է, որ արևելահայերենի եռաստիճան բաղաձայնական համակարգի (բ-ւլ-վ) դիմաց արևմտահայերենի երկաստիճան հակադրության զույգի (բ-վ) առկայությունը ինքնին արդեն ենթադրել է տալիս արևմտահայերենի բառա-քերականական, ձևաբանական մակարդակում համանունների շարքերի համեմատական առատություն (հմմտ. արևել. գար-կար-լար կամ դեր-տեր-քեր և արևմտ. զար-լար-լար կամ դեր-քեր-քեր)։

4) Տիպաբանական հետազոտությունների ժամանակ ընդլայնված նության մեջ հաճախ բավարարվում են ընդվականացվածքների այնպիսի զուգադրությամբ, որ հաշվի է առնում միայն տվյալ ընդվորակ գործառական (ֆունկցիոնալ) վիճակը (գերազանցապես՝ գրական լեզուն)։ Մինչդեռ ընդհանուր տեսությամբ համար էական է նաև տվյալ ընդվորակ գործառական մյուս տարրերակների հաշվառումը։ Այդ առումով արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրությունը կարելի է կատարել երկու պլանով՝ լայն և չորս լայն առումով այն կարելի է իրագործել հիմնված ինչպես արևելահայ բարբառների, այնպես էլ արևմտահայ բարբառների լեզվական հարուստ նյութի հաշվառման վրա։ Այդպիսի քննությունը, սակայն, մեր ընդվորակ ուսումնասիրության արդի փուլում գրեթե իրագործելի չէ, և թե նկատի ունենանք մեր բարբառների ամբողջական գիտական և սպառնիչ նկարագրության ներկա վիճակը։

⁵ Տիպաբանական քննության ժամանակ ընդհանրապես կիրառելիք սկզբունքների մասին մանրամասն տե՛ս հեղինակի «Դասական գրարարի տիպաբանական ընդլայնումը» աշխատանքի ներածական մասը («Հայոց լեզվի կառուցվածքի հարցեր», Վոլովածու, տպագրության մեջ է)։

Քննության նեղ առումը, որը նպատակահարմար է ընդունել աշխատանքի առաջին փուլում, իր մեջ է ներառում արևելահայ և արևմտահայ գրական լեզվափոխակերպի զուգադրությունը: Այդ նըշանակում է, որ պետք է հաշվի առնել միայն արևելահայ և արևմտահայ գրական լեզուների նյութը: Այդպիսով անհրաժեշտ է վերացարկվել ամհատական լեզվագործածության, բարբառային-խոսակցական վիճակներին միայն բնորոշ առանձնահատկություններին և ամենուրեք նկատի ունենալ միայն գրական նորման: Ընդ որում, հարկավոր է հենվել գրական լեզվի ինչպես գրային վիճակի (գրավոր տեքստերի), այնպես էլ հատկապես բանավոր (անմիջական) լեզվահաղորդակցման ընձեռած տվյալների վրա: Որոշ դեպքերում (նկատի ունենք, օրինակ, գրական արևմտահայերենի հընչույթային մակարդակում ձայնեղի և շնչեղ խոսքի դիրքային առանձնահատկությունները բացահայտելը) բանավոր հաղորդակցման միջոցը շատ ավելի օգտակար կարող է լինել, քան գրավոր տեքստերի ուսումնասիրությունը, որովհետև միևնույն գրային նշանների հընչումները (բնականաբար՝ հատկապես արևմտահայերենում) զանազանությամբ են տալիս: Այդ առումով առաջանում է հուսալի տեղեկատու անձի (ինֆորմանտի) հարցը: Եթե գրական արևելահայերենի համար դա ոչ մի դժվարություն չի ներկայացնում, ապա գրական արևմտահայերենի համար պետք է նշել հետևյալը. այն արևմտահայը, որը տեղական ժամանակ գտնվել է արևելահայերի լեզվահաղորդակցման ոլորտում, արդեն որոշ չափով զրկվել է վստահելի տեղեկատու անձ լինելուց, քանի որ նա այս կամ այն ձևով գտնվել է արևելահայ գրական արտասանության ազդեցության տակ, և դրա հետևանքով տվյալ արևմտահայի մոտ հընչույթային հատկանիշների որոշ շփոթություն կարող է առաջանալ: Քննության ժամանակ որպես արևմտահայերենի տեղեկատուներ (ինֆորմանտ) ծառայել են Երևանի պետական համալսարանի արտասահմանյան ուսանողների համար կազմակերպված նախապատրաստական բաժին նոր միայն ընդունված արևմտահայ երիտասարդները: Հատկապես նշում ենք երիտասարդները, որովհետև, ինչպես ցույց են տալիս նորագույն ուսումնասիրությունները⁶, մեր (նկատի ունենք, արևելահայ) արտասանական նորմայի մեջ որոշակի փոփոխու-

6 Հմտ. էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, ինչպես նաև՝ Բ. Ղաբազյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974:

թյուններ են տեղի ունեցել, Եվ ահա, որպեսզի զուգադրվեն արդի համաժամանակյա նորմաները, այդպիսի մոտեցում ենք ունեցել:

5) Հարց կարող է առաջանալ, թե զուգադրական քննությունը արտահայտության պլանի⁷ց պետք է տանել դեպի բովանդակության պլանը, թե ընդհակառակն: Անշուշտ, կարելի էր շարադրանքը տանել ներքինից դեպի արտաքինը՝ ձևականը, շարահյուսական կարգերի քննությունից անցնել ձևաբանական կարգերի և գործառնությունների արտահայտման արտաքին եղանակների, հաշվի առնելով, որ փերչինսերս աչքի են ընկնում դրսևորման բազմազանություններ: Թեև այդպիսով լեզվի անկրկնելի ձևը ավելի ցայտուն կը դրսևորվեր, սակայն, ինչպես նկատել է Գ. Զահուկյանը, «Մենք դեռևս շունենք բովանդակության տարրերի բացահայտման այնպիսի մի ընդհանրական բաժնի (իմաստաբանական համընդհանուր ուսմունք), որ հնարավորություն տար թափանցելու բոլոր ընդունների բովանդակային կողմի մեջ»⁷: Այդ պատճառով զուգադրական քննությունը հարմար է սկսել արտահայտության պլանից՝ գնալով դեպի բովանդակության պլանը: Եթե նկատի ունենանք, որ սույն զուգադրական քննության ընթացքում նպատակ է հետապնդվում պարզել արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների ընդհանուր օրինաչափությունները, ասլա վերջիններիս մասին որոշակի պատկերացում կարող են տալ լեզվակառուցվածքային առանձնահատկությունները (անհամապատասխանություններ):

6) Ինչպես առհասարակ նորադույն լեզվաբանական ուսումնասիրություններում, արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների զուգադրության ժամանակ ևս պետք է պահպանել քննության միապլանայնությունը: Նկատի ունենալով այն, որ լեզվական միավորների միապլանային համադրության դեպքում են միայն ի հայտ բերվում լեզվական համասեռությունները, զուգադրության ժամանակ բովանդակության և արտահայտության պլանների ներկայությունը չպետք է շփոթել իրար հետ:

7) Պետք է նշել, որ կառուցվածքներով իրարից հեռու լեզուների զուգադրական քննության ժամանակ էականը առկա տարբերությունների շղթայում ընդհանուր գծերի բացահայտումն է, որը և զուգադրության հիմք է ծառայում. այսինքն՝ եղած ընդհանրությունները լեզուների զուգադրության ժամանակ հիմք են ծառայում այն դեպ-

7 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 99:

քում, երբ նրանց միջև ընդհանրությունները քիչ են: Հակառակ դեպքում, երբ զուգադրվում են մերձավոր լեզուներ, որոնք բազմաթիվ կառուցվածքային ընդհանրություններ ունեն, զուգադրության հիմքում գրվում են լեզվական տարբերություններ: Ընդհանրությունների աճմանը զուգընթաց կարող են հաշվի առնվել նաև առավել նվազ տարբերությունները, որոնք ընդհանուր լեզվաբնութագրման դեպքում կարող էին և չմատնանշվել: Հայոց լեզվի երկու վիճակների զուգադրության ժամանակ, բնականաբար, կիրառելի է վերջին մոտեցումը՝ տարբերությունների հաշվառումը:

8) Անհրաժեշտ է զուգադրել արևելահայ և արևմտահայ գրական լեզուների ներկա վիճակները: Պետք է նշել, որ արևելահայերենի և արևմտահայերենի ներկա վիճակ ասելը որոշ պայմանականություն ունի, որովհետև լեզվի զարգացման ընթացքում յուրաքանչյուր ներկա վիճակ անխուսափելիորեն դառնում է անցյալ, այսինքն՝ համաժամանակյա պահը անատիկ, կայուն չի մնում:

Եթե հաշվի առնենք, որ լեզվի պատմության մասին խոսելիս միշտ չէ, որ նկատի ունենք հարյուրամյակներով իրարից բաժանված երևույթներ և փաստեր, ապա կարելի է ասել, որ եթե լեզվի համաժամանակյա կտրվածքի տակ հասկանանք համակարգի այսպես կոչված վարկենական նկարագիրը, ապա լեզվաբաններին քաջ հայտնի է, որ անգամ այդ դեպքում երևան կգան մեծնող լեզվական փոփոխությունների և նոր միայն անաջատր երևույթների մասնակի դրսևավորումներ, մի խոսքով՝ երևան կգա լեզվի զարգացման շարժընթացը: Նկատի ունենալով այդ հանգամանքը, անհրաժեշտ է հրատակություն մտցնել ինչպես արևելահայերենի, այնպես է արևմտահայերենի առդի վիճակ հասկացության մեջ՝ կատարելով որոշակի պարզեցացում (շրջանաբաժանում), այսինքն՝ Հ. Պարոնյանի լեզուն չհամեմատել, օրինակ, Հ. Մաթևոսյանի լեզվի հետ:

Ընդունելով հանդերձ, որ արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի կառուցվածքային էական (բնորոշ) գծերի բացահայտման ժամանակ հայոց լեզվի զարգացման նախորդ շրջանների վիճակները չեն կարող բնորոշ հանդիսանալ, միաժամանակ պետք է հաստատել այն ճիշտ դիտողությունը, որի համաձայն լեզվաբանի դերը ոչ միայն այն է, որ ներկայացնի համակարգը, այլև, ամենակարևորը, ներկայացնի լեզվի տվյալ համաժամանակյա կտրվածքը՝ որպես ներքին դինամիկ զարգացման անցումային վիճակ: Այդ նշանակում է, որ առանձին դեպքերում նըշված լեզվավիճակների համաժամանակյա զուգադրական քննություն-

ներ դեռևս բավարար չէ առկա լեզվական երևույթների սպառիչ բնութագրման համար:

9) Արևելահայերենի և արևմտահայերենի արդի փիճակները կարելի է զուգադրության ենթարկել մի քանի մոտեցումներով՝ կախված հետապնդած նպատակներից. մի դեպքում կարելի է նպատակ ունենալ այն, թե հայոց լեզվի զարգացման տարածամասնակյա կրտրվածքներով ինչպես են առաջացել այդ երկու լեզվավիճակները. մի այլ դեպքում՝ վերջիններիս քննության մեջ նրանց մերձեցման ուղիներ բացահայտելը, փերջապես՝ հետևողական զուգադրության մեջ կարելի է պարզապես վեր հանել նրանց միջև եղած լեզվակառուցվածքային տարբերությունները և այլն:

Ներկա զուգադրական քննությունը հիմնվում է ժամանակակից հայոց լեզվի համաժամանակյա կտրվածքների վրա: Հաշվի առնելով, որ բավական հետաքրքրական է ինչպես նաև մեր երկու լեզվավիճակների հետևողական զուգադրություններն ըստ լեզվի զարգացման հետևյալ երեք հաջորդական ենթաշրջանների (XVIII դ.—մինչև XIX դ. 60—70-ական թթ., մինչև 1920 թվականը, XX դ. 20-ական թթ.—առ այսօր): Սույն աշխատանքը հատկացվում է այն խնդրի պարզաբանմանը (դրանից հետո միայն անցում է կատարվում քննության բուն մասին՝ արդի լեզվավիճակների զուգադրությանը): Այդպիսով հնարավորություն է ընձեռվում որոշակի ժամանակահատվածի ընթացքում բացահայտել լեզվի զարգացման ընդհանուր ուղղվածությունը: Որպես լուսաբանություն այն բանի, թե ինչպես աստիճանական զարգացմամբ արդի հայերենի տարբերակները հասան տարբեր հոլովական ձևերի նույնացման (միօրինականացման), կարելի է բերել հետևյալ օրինակը.

Հասկանիչ	Լեզվաճյուղ	XVIII—XIX դ. 60—70-ական թթ.	XIX դ. 80—70-ական թթ. — 1920 թ.	1920 թ. — առ այսօր
Նախդրվ հայացան (դերանունների) համար	արեմասանյերեն	+	+	—
	արևելահայերեն	—	—	—

Զուգադրությունն ըստ երեք ենթաշրջանների հնարավորություն կտա պարզելու նաև մեր արդի գրական լեզուների բարբառային հիմքերից (Պոլսի բարբառ և Արարատյան բարբառ) ունեցած այսպես կոչված սմաքրության աստիճանը, ինչպես նաև բացահայտելու այդ աստիճանի հետագա փոփոխությունները:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բոլոր լեզուներն

էլ, բնականաբար, առավել կամ պակաս շափով, շեղվում են այս-
պես կոչված «իդեալական ոչ-բարբառային» վիճակից, ապա վերո-
հիշյալ մոտեցմամբ հիմնվելով մեր դրական լեզվի երկու մշակողների
տարբեր հատվածների ընձեռած լեզվանյութի վրա, կարելի է որո-
շակի, կոնկրետ պատկերացում կազմել արեւելահայ և արեւմտահայ
դրական տարբերակների նսրմավորման աստիճանի մասին՝ ըստ
զարգացման հաջորդական փուլերի:

10) Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր լեզվական
երևույթի գործառական բեռնվածության աստիճանը երկու գր-
ական տարբերակներում: Եթե տիպաբանորեն նույնական կոչենք
այնպիսի լեզվական երևույթները, որոնք տվյալ համակարգում
ունեն նույնական գործառություն, ապա անհրաժեշտություն է ա-
ռաջանում ոչ միայն մատնանշել, թե ինչպիսի՝ լեզվական միա-
վորներ են առկա երկու տարբերակներում և անգամ՝ քննվող միա-
վորները ինչպիսի՝ տարբերիչ հատկանիշներով են օժտված, այլև՝
ինչպիսի՝ գործառական բեռնվածություն են կրում: Այսպես, օրի-
նակ, թե՛ արեւելահայերենի և թե՛ արեւմտահայերենի հնչույթային
համակարգերում առկա է թ հնչույթը, որը երկու տարբերակներում
էլ միևնույն տարբերիչ հատկանիշներով է օժտված. այդուհանդերձ
արեւմտահայերենի թ-ի և արեւելահայերենի թ-ի միջև նույնու-
թյուն չի կարող լինել գործառական առումով, որովհետեւ մեկը (ա-
րեւելահայերենի թ-ն) հանդես է գալիս որպես եռաստիճան շարքի
բաղադրիչ՝ դ-ա-թ, մյուսը (արեւմտահայերենը)՝ երկաստիճան
(դ-թ): Նշանակում է, արեւմտահայերենի թ հնչույթը գործառական
ավելի մեծ բեռնվածություն է կրում, քանի որ նա, բացի արեւելա-
հայերենին հատուկ թ-ի հիմնական դիրքերից, հանդես է գալիս նաև
այնպիսի ոլորտներում, որտեղ արեւելահայերենը գործածում է դ
հնչույթը:

11) Արտահայտության և բովանդակության պլանների հարա-
բերակցային քննության դեպքում ի հայտ բերված առանձնա-
հատկությունները կարող են լինել՝ միևնույն գործառության, քե-
րականական միևնույն կարգի արտահայտման համար լեզվական
տարբեր միջոցների օգտագործումը և, ընդհակառակն, միևնույն
լեզվական միջոցների օգտագործումը տարբեր քերականական
գործառություններ արտահայտելու համար: Ըստ այդմ պետք է նը-
շել հետևյալը. ժամանակակից արեւելահայ և արեւմտահայ գրա-
կան լեզուների տիպաբանական անհամապատասխանությունները
գերազանցապես պայմանավորված են ընտրության հետևյալ հիմ-

նական տիպերով. ա) նշանակիր—աննշանակիր ընտրություն,
բ) ազատ—ոչ-ազատ ընտրություն:

Ազատ ընտրությունը առկա է այն դեպքում, երբ հեշտությամբ կարելի է այս կամ այն ձևական, իմաստային կամ գործառական դասի մեջ մտնող տվյալ տարրը փոխարինել նույն դասի մեջ մտնող մեկ այլ տարրով: Նշանակիր ընտրությունը առկա է այն դեպքում, երբ նույն դասի մեջ մտնող մեկ այլ լեզվական տարրի ընտրության դեպքում ասույթի բովանդակությունը փոխվում է: Ոչ-ազատ ընտրությունը տրամադրված է այն բանով, որ իրացվում է տվյալ համակարգի թույլատրելի հնարավորություններից մեկը: Ազատ աննշանակիր ընտրությունը հնարավոր է լեզվի այնպիսի երկու ձևերի միջև, որոնք հավասարապես թույլատրելի են կառուցվածքի և կանոնի (նորմայի) համար:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրական քննության ժամանակ կարող են ի հայտ գալ երեք տիպի տարբերություններ.

1. Կառուցվածքային մակարդակում դրսևորվող տարբերություններ,

2. Նորմայում (կանոնական մակարդակում) դրսևորվող տարբերություններ,

3. Կիրարկության (ուղուս) մակարդակում դրսևորվող տարբերություններ:

Ներկա զուգադրական քննության ընթացքում, բնականաբար, անհատական լեզվագործածության առանձնահատկությունները ուղադրության չեն առնվում:

Նշված առանձնահատկությունները կարող են դրսևորվել ինչպես արտահայտության, այնպես էլ բովանդակության տրամաբանությամբ: Այսպես, օրինակ, բովանդակության ոլանում առանձնահատկությունները կարող են դրսևորվել հետևյալ կերպ՝ որե՛կ հնչույթային հատկանիշի կամ որե՛կ քերականական կարգի առկայությունը մեկում և բացակայությունը մյուսում:

12) Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրական քննության ժամանակ անհրաժեշտ է կիրառել որակական և քանակական մի շարք մեթոդներ: Ընդամեն ցանկալի արդյունք կարելի է ստանալ այդ մեթոդների կոմպլեքս կիրառմամբ: Առանձին դեպքում անհրաժեշտ է դիմել նաև փորձառական ուսումնասիրության: Արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային բնորոշ գծերը բացահայտելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև

վերջիններիս հնչերանգային (ինտոնացիոն) բնութագրերը, Պետք է ենթադրել, որ այլ կարևոր առանձնահատկությունների զուգորն-
թաց մեկ, գրական լեզվի երկու տարբերակները որոշ չափով դա-
նազանվում են նաև հնչերանգի առումով: Թե ինչ աստիճանի շե-
ղում է առկա այդ երկու վիճակների հնչերանգային բնութագրերի
միջև, կարելի է պարզել գերազանցապես փորձառական ուսումնա-
սիրության ճանապարհով:

13) Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրա-
կան քննությամբ կարելի է պարզել նաև մեր երկու դրականների
ավելցուկայնության (избыточность) աստիճանը, Պետք է ենթա-
դրել, որ լեզվից լեզու ավելցուկայնության աստիճանը մեծ տատա-
նումներ չի տա: Ինչն է ստիպում այդպես մտածելու նախ և ա-
ռաջ յուրաքանչյուր լեզու կատարում է բոլոր մարդկային լեզուներ
ի առջև դրված երկու հիմնական գործառությունները՝ հաղորդակ-
ցական և արտահայտչական: Այստեղ ընդհանրապես հարցի գրծ-
վարությունն այն է, թե լեզվական ինչպիսի երևույթներ համարել
ավելցուկային: Վերջին ժամանակներս կատարված հետազոտու-
թյունները հաստատում են ամեն մի մարդկային լեզվի 40—60 տո-
կոս ավելցուկայնություն ունենալը: Այդ առումով բավական հետա-
քերթիք կլինի արևելահայերենի և արևմտահայերենի ավելցուկայ-
նության աստիճանների զուգադրումը:

14) Լեզվաբանական ուսումնասիրությունների մեջ վիճակա-
գրական մեթոդների կիրառման անհրաժեշտությունը դժվար է
ժխտել: Կոնկրետ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զու-
գադրական քննության համար վիճակագրական փորձերի անհրա-
ժեշտությունը ավելի ևս մեծանում է, որովհետև շատ հաճախ
նույն երևույթն առկա է արդի հայերենի երկու տարբերակներում
հավասարապես, սակայն նրանք իրենց տարբեր հաճախականու-
թյուններով տարբեր արժեք են ստանում: Առանձին դեպքում
նմանօրինակ հաճախականություն ունեցող երևույթների միջև
տարբեր ուրուտային բաշխվածություն է առկա լինում: Այսպես, օ-
րինակ, ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերե-
նում ըստ հաճախականության առաջին տեղերը պատկանում են Ի
և Ու հոլովումներին: Այդուհանդերձ նշված հոլովումները իրենց
համակարգերում ուրուտային տարբեր բաշխվածություն ունեն-
եթե արևելահայերենի հոգնակի թվում բոլոր հոլովումներին պատ-
կանող բառերը թեքվում են Ի հոլովմամբ (մայր-մոր-մայրե-մայ-
րերի), ապա արևմտահայերենում, ընդհակառակն, բոլոր հոլո-

վումեների, այդ թվում նաև Ի հռոմեական պատկանող անունները թերթում են Ու հռոմեամբ (գետ-գետի-գետեր-գետերու),

15) Երկու լեզվական վիճակների բնութագրման հիմքում պետք է դնել ոչ թե մեկ կամ մի քանի հատկանիշներ, այլ հատկանիշների փնջեր: Ընդամեն, եթե նկատի ունենանք, որ պատահականորեն ընտրված հատկանիշների (ցուցիչների) թվի ավելացումը ըստ էության ոչ թե նոր որակ կարող է առաջացնել, այլ միայն մեծացնել աշխատության ծավալը, ապա պետք է նկատի ունենալ միայն տվյալ լեզվական վիճակների կառուցվածքային բնորոշ, էական հատկանիշները: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ Գ. Զահուկյանի կողմից հայագիտության մեջ առաջին անգամ առաջ քաշված բազմահատկանիշ դասակարգման մեթոդին, որի հիմքում դրված հատկանիշների մասին խոսվում է Գ. Զահուկյանի վերոհիշյալ հոդվածում: Այդ թերևս անհրաժեշտ է նաև այն առումով, որ իր հոդվածում Գ. Զահուկյանը առաջին անգամ թվային որոշակի տվյալներով քննության առարկա է դարձնում ժամանակակից հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ դրական տարբերակների մերձակցության աստիճանը, խնդիր, որ հանդիսանում է ներկա զուգադրական քննության բուն նպատակը, որին ծառայում են վերոհիշյալ սկզբունքները:

Հայ գրական լեզուների մերձակցությունը բացահայտելու համար հեղինակն օգտագործել է բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման հիմքում դրված 100 հատկանիշ պարունակող սխեմայի ընձեռած տվյալները:

Գ. Զահուկյանի ցուցակը պարունակում է հիսուն հնչյունական, հիսուն քերականական (ավելի ճիշտ՝ ձևաբանական) հատկանիշներ⁸:

Գ. Զահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումը հնարավորություն է տալիս ի թիվս այլ հարցերի, ռավելի որոշակիորեն պատկերացնելու գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը: Պետք է նշել, որ սույն մեթոդի օգտագործումը խիստ արդյունավետ է այն դեպքում, երբ ինչպես հեղինակն է նշում, ցանկանում ենք պարզել գրական լեզուների՝ բարբառների հետ ունեցած մերձակցության աստիճանը: Դրությունը, քնականաբար, փոխվում է, երբ դրվում է մեր երկու գրական լեզվավիճակների փոխհարաբերության հարցը, ինքնակա կերպով՝ ընդհանրու-

⁸ Հատկանիշների նկարագրությունը տե՛ս Գ. Ռ. Զահուկյանի հիշյալ աշխատությունը:

թյունների և տարբերությունների աստիճանի պարզաբանումը իրար հետ ունեցած հարաբերությունները Այդ դեպքում 100 հատկանիշ սլարունսկուդ վերոհիշյալ ցուցակը որոշ փոփոխությունների ենթարկման կարիք է զգում, քանի որ եթե այդ հատկանիշների ընտրության ժամանակ, իրոք հաշվի են առնված հայ բարբառների նյութական, կառուցվածքա-տիպաբանական առանձնահատկությունները, ապա կոնկրետ արևելահայերենի և արևմտահայերենի մերձավորության աստիճանը պարզելու համար նշված հատկանիշների արոշ մասը կարծես թե դառնում է ավելցուկային (այսպես՝ արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային ընդհանուր գծերի բացահայտման համար քմայնացած ձայնափոխություն, առկայությունը, երկար և կարճ ձայնավորների տարբերակվածությունը և նմանօրինակ այլ հատկանիշների հաշվառումը):

Հայոց գրական լեզվի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների շարահյուսական կառուցվածքները օժտված են որոշակի առանձնահատկություններով, որոնց ուսումնասիրումը և հաշվառումը անհրաժեշտ է, որովհետև լեզվակառուցվածքների մերձակցությունը բացահայտելիս շարահյուսական տվյալները խիստ օգտակար են: Բացի այդ, Գ. Ջահուկյանի ընտրած հնչյունական և ձևաբանական մակարդակի հատկանիշների շարքում առանձին դեպքերում պետք է ավելացնել նոր հատկանիշներ, որոնք նույնպես կարևորություն են ներկայացնում նշված վիճակների մերձակցության աստիճանը պարզելու տեսակետից: Այսպես՝ եթե արևելահայերենին (ինչպես թեքման, այնպես էլ բառակազմության ոլորտներում) հատուկ է շեշտափոխական հնչյունափոխության երևույթը (միս-մըսի, ջուր-ջըրի, սիրտ-սըրտոտ, ջուր-ջըրոտ), ապա արևմտահայերենի քերականական կառուցվածքին հատուկ է հիմքը կայուն սլահաներու ձգտումը թե՛ թեքման և թե՛ բառակազմության ժամանակ (միս-միսի, ջուր-ջուրոտ, սիրտ-սիրտոդ, ջուր-ջուրի):

Արևելահայ գրական լեզվի կրկնակի ժխտման փոխարեն (ոչիճչասաց), արևմտահայ գրական տարբերակը կիրառում է մեկ ժխտում (ոչ իճչ ըսավ):

Այսպսիով, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրական քննության ժամանակ սլոռֆ. Գ. Ջահուկյանի մեթոդը կարելի է կիրառել երկու ձևով: Մի դեպքում՝ անփոփոխ, այնպես ինչպես նա կա, քննելու համար մեր գրական երկու լեզվաճյուղերի ունեցած հարաբերությունները գրաբարի, միջին գր-

րական հայերենի և բարբառների հետ. երկրորդ դեպքում, երբ նը-
պատակ է դրվում իրավորժևելու միմիայն արևելահայ և արևմտա-
հայ դրական լեզուների ինֆնակա դուդադրությունը, հատկանիշնե-
րի շարքում (ցուցակի մեջ) որոշակի փոփոխություններ պետք է
մտցնել:

Վերահիշյալ սկզբունքների հետևողական կիրառմամբ ստաց-
ված արդյունքները ավելի հստակ պատկերացում կարող են տալ
արևելահայ և արևմտահայ դրական լեզուների փոխհարաբերու-
թյան մասին՝ ըստ առանձին մակարդակների ունեցած կառուց-
վածքային ընդհանրությունների և առանձնահատկությունների,
խնդիր, որի պարզումը հայագիտության համար, անկասկած, որո-
շակի կարևորություն է ներկայացնում: